

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ



Մ.Գ.Մանուչարյան
13 հունիսի 2024թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Գագիկ Մուշեղի Հակոբյանի «Պարտադիր ապահովագրատեսակների ներդրման ազդեցությունը ՀՀ տնտեսության և ապահովագրական շուկայի զարգացման վրա» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.03 «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Մասնակցում էին՝ Մերի Մանուչարյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ*, Լիանա Խաչատրյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ*, Եվգենյա Հակոբյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Ռոբերտ Սարինյան՝ *տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ.*, Բելլա Գաբրիելյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ*, Գրիգոր Մանուկյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ*, Գևորգ Հարությունյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Ստեփան Պապիկյան՝ *տեխ.գիտ.թեկնածու*, Ալվարդ Մատինյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ*, Գևորգ Մարտիրոսյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ապահովագրության շուկայական մեխանիզմների զարգացումը թույլ է տալիս նվազեցնել բնակչության աճող պահանջմունքների հետևանքով ծագող հակասությունները և ստեղծել դրանց բավարարման տնտեսական մեխանիզմներ: ՀՀ-ում արդյունավետ տնտեսական համակարգի կայացման, հասարակության կայունության ու տնտեսության անխափան կենսագործունեության համար իր կարևոր դերակատարությունն ունի ապահովագրական համակարգի շարունակական զարգացումը:

Ապահովագրական շուկայի զարգացման պետական միջամտության ամենավաղ օրինակը պարտադիր ապահովագրատեսակների ներդրումն է: ՀՀ-ում այս պահին

առկա է մեկ համապարտադիր ապահովագրատեսակ՝ ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության (ԱՊՊԱ), որը հասցրել է ապացուցել իր արդյունավետությունը, ինչպես ՀՀ քաղաքացիների, այնպես էլ պետության համար: ԱՊՊԱ-ի տարիների փորձը, նրա ներդրման և զարգացման դժվարությունները այսօր թույլ են տալիս կատարել ևս մեկ քայլ պարտադիր ապահովագրության շուկայի զարգացման համատեքստում: Այս համատեքստում ՀՀ կառավարությունը քննարկում է պարտադիր բժշկական ապահովագրության ներդրման տարբեր հայեցակարգեր, որի արդյունավետ ներդրումը պահանջում է առկա հնարավորությունների, ռիսկերի, տնտեսության վրա ազդեցության շրջանակների և հետևանքների համակողմանի ուսումնասիրում, որը հնարավորություն կտա բացահայտել պարտադիր ապահովագրատեսակների, մասնավորապես պարտադիր բժշկական ապահովագրության ներդրման կառուցվածքային և ինստիտուցիոնալ ազդեցությունը ՀՀ տնտեսության զարգացման, ինչպես նաև ողջ ապահովագրական համակարգի արդյունավետ կենսագործունեության և ֆինանսական կայունության վրա, ինչն էլ պայմանավորում է ուսումնասիրվող թեմայի արդիականությունը և հրատապությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության նպատակն է բացահայտել պարտադիր ապահովագրության ներդրման ազդեցությունը ՀՀ տնտեսության և ապահովագրական շուկայի վրա՝ գնահատելով պարտադիր ապահովագրատեսակների և ՀՀ տնտեսական զարգացման միջև առկա փոխառնչությունները: Ելնելով սահմանված նպատակից՝ ատենախոսությունում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել ապահովագրական շուկային և պարտադիր ապահովագրությանը վերաբերող տեսական մոտեցումները և առավել նշանակալի էմպիրիկ հետազոտությունները,
- ուսումնասիրել պարտադիր ապահովագրատեսակների ներդրման մեթոդաբանական հիմնահարցերը, սկզբունքները և խնդիրները,
- հետազոտել ապահովագրական շուկայի և պետությունների տնտեսական զարգացման միջև փոխկապվածությունների համաշխարհային փորձը,
- վերլուծել պարտադիր ապահովագրատեսակների ներդրման և զարգացման միջազգային փորձը,
- ուսումնասիրել ՀՀ ապահովագրական համակարգը և նրա դերը տնտեսության զարգացման համատեքստում,

- ուսումնասիրել ՀՀ առողջապահական համակարգի ֆինանսավորման ներկա վիճակը և բացահայտել զարգացման հիմնախնդիրները,
- վերլուծել պարտադիր բժշկական ապահովագրության ներդրման նախադրյալները և մշակել ներդրման հայեցակարգ,
- վերլուծել և գնահատել ՀՀ պարտադիր ապահովագրության փաստացի ցուցանիշների ազդեցությունը տնտեսական զարգացման վրա,
- գնահատել պարտադիր բժշկական ապահովագրության ներդրման ազդեցությունը ՀՀ տնտեսական աճի ապահովման և ապահովագրական շուկայի զարգացման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության շրջանակներում իրականացված ուսումնասիրության հիման վրա ստացվել են տեսական, մեթոդական և գործնական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթն արտացոլող հիմնական դրույթներն են.

- Էկոնոմետրիկ վերլուծությունների օգնությամբ գնահատվել են ՀՀ ապահովագրական շուկայի և տնտեսական աճի միջև առկա փոխկապվածությունները, որոնց արդյունքում բացահայտվել է միակողմանի ազդեցություն կամավոր ապահովագրության և երկկողմանի պատճառահետևանքային փոխկապվածություն պարտադիր ապահովագրության ու տնտեսական զարգացման միջև:
- Բացահայտվել է ՀՀ պարտադիր ապահովագրության և տնտեսական աճի միջև փոխկապվածությունների լոգարիթմական բնույթը: Հետագա ռեգրեսիոն վերլուծությունների արդյունքում կառուցվել է մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի և մեկ անձի հաշվով պարտադիր ապահովագրության ապահովագրավճարների լոգարիթմական հավասարումը, որը թույլ է տալիս տրված մեկ անձի հաշվով պարտադիր ապահովագրության ապահովագրավճարների մեծության պարագայում կանխատեսել տվյալ տարվա մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն:
- Գնահատվել է ՀՀ առողջապահության ոլորտի ֆինանսավորման և պետական բյուջեի ու մի շարք այլ մակրոտնտեսական ցուցանիշների միջև փոխկապվածությունը՝ բացահայտելով բարձր կոռելացվածություն մակրոտնտեսական ցուցանիշներից և ցածր զգայնություն բնակչության առողջապահական ծախսերից:

- Բացահայտվել է, որ ապահովագրական ընկերությունների շահութաբերության և ֆինանսական կայունության վրա ազդող հիմնական գործոնը ներդրումային գործունեությունն է, որպես որի ապահովման հենք հիմնավորվել են ԱՊՊԱ-ից և առողջության ապահովագրությունից գոյացող ապահովագրավճարները և տեխնիկական պահուստները: Ապահովագրավճարների շարունակական մուտքը նույնիսկ տնտեսական անկման պարագայում թույլ է տալիս ապահովագրողներին կատարել ներդրումներ այն ժամանակ, երբ մյուսները կորցնում են: Ապահովագրավճարների շարունակական հոսքը թույլ է տալիս ապահովագրողներին հանդես գալ այն ակտիվների բնական գնորդ, որոնք թերագնահատվել են անկման շրջանում: Նրանց ներդրումային ռազմավարությունները, հատկապես երկարաժամկետ գործունեության համար, թույլ են տալիս տնտեսության կայունացնողի դեր խաղալ:
- Մշակվել է պարտադիր բժշկական ապահովագրության փուլային ներդրման հայեցակարգ՝ միաժամանակ գնահատելով համակարգի ներդրման ֆինանսական բեռը և միավոր ապահովագրավճարը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածություն բաժնում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության հիմնական նպատակը, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, աշխատանքի տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված հիմնական արդյունքները, ինչպես նաև ատենախոսության արդյունքների գիտական և գործնական կիրառական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Պարտադիր ապահովագրատեսակների ներդրման տեսամեթոդական հիմքերը և համաաշխարհային ապահովագրական շուկան» գլխում անդրադարձ է կատարվել ապահովագրական շուկային և պարտադիր ապահովագրության դերին ու առանձնահատկություններին, ինչպես նաև պարտադիր ապահովագրատեսակների ներդրման մեթոդաբանական հիմնահարցերին, սկզբունքներին և խնդիրներին: Այս գլխում ներկայացվել է նաև համաաշխարհային ապահովագրական շուկայի դերը ազգային տնտեսությունների զարգացման գործում:

Ատենախոսության երկրորդ՝ «Պարտադիր ապահովագրատեսակների զարգացման միջազգային և ՀՀ փորձի գնահատումը» գլխում իրականացվել է պարտադիր ապահովագրատեսակների ներդրման, զարգացման միջազգային և ՀՀ փորձի վերլուծություն ու գնահատում: Հանգամանորեն քննարկվել է պարտադիր

ապահովագրատեսակների զարգացման միջազգային առաջավոր փորձը, որի հետ համեմատական վերլուծությամբ ներկայացվել է պարտադիր ապահովագրության դերը ՀՀ ապահովագրական համակարգի և տնտեսության զարգացման գործում:

Ատենախոսության երրորդ՝ «Պարտադիր ապահովագրական համակարգի զարգացման հեռանկարները և կատարելագործման ուղիները ՀՀ-ում» գլխում ներկայացվել է ՀՀ պարտադիր ապահովագրության փաստացի ցուցանիշների ազդեցության գնահատում և վերլուծություն, նաև մշակվել է պարտադիր բժշկական ապահովագրության ներդրման և իրականացման մեխանիզմներ, կատարվել է մշակված հայեցակարգի ազդեցության գնահատում ՀՀ տնտեսական աճի ապահովման և ապահովագրական շուկայի զարգացման վրա:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս կատարելու եզրահանգումներ, որոնք ամփոփված են ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ինչպես ցանկացած գիտական աշխատանք, սույն ատենախոսությունը ևս զերծ չէ որոշակի թերություններից, որոնցից կարևորել ենք հետևյալները.

1. Ատենախոսության 2.2 ենթահարցում ճիշտ կլիներ նշվելին ՀՀ-ում ապահովագրական ընկերությունների թիվը, կազմավորման տարեթիվը, քանի որ ակտիվների փոփոխությունը վերլուծելիս չի նշվում, թե ինչի հաշվին են դրանք ավելացել և այն տպավորությունն է ստացվում, որ փոփոխությունը կատարվել է ի հաշիվ ապահովագրավճարների ավելացման: Ցանկալի կլիներ նաև ատենախոսությունում ներկայացվեր ապահովագրական ընկերությունների ներդրումների դինամիկան, որից պարզ կդառնար, թե ո՞ր ընկերությունն է հակված շահույթի կուտակմանը, ո՞րը՝ ՀՀ բնակչության առողջության վերականգնման ծախսերի փոխհատուցմանը:
2. Էջ 97-98-ում հեղինակը նշել է, որ 2020թ-ից առողջության ապահովագրության ապահովագրավճարներն ունեցել են կայուն աճի միտում: Միգուցե դա պայմանավորված է եղել առողջապահական ծառայությունների գնաճով: Առողջապահական ապահովագրության զարգացման միտումների ճիշտ գնահատման նպատակով, ցանկալի կլիներ համեմատել ապահովագրավճարների և առողջապահական ծառայությունների սակագների աճման տեմպերը:
3. Ատենախոսության 123-րդ էջում հեղինակը նշում է. «... ՀՀ-ում գրպանից դուրս ծախսերը միջինում կազմում են առողջապահության ծախսերի գրեթե 82%-ը»: Ի՞նչ ասել է թե գրպանից դուրս ծախսեր, միտքը չի հասկացվում և զուրկ է գիտականությունից: Հնարավոր է, որ այն զուտ վատ շարադրանքի արդյունք է:

4. Ատենախոսության 3-րդ գլխում հեղինակը ունի էկոնոմետրիկ մի քանի մոդելներ, որոնց ներկայացումը, մեր կարծիքով, թերի է: Սովորաբար էկոնոմետրիկ մոդելների մասին խոսելիս մինչև արդյունքներին հասնելը հստակ սահմանվում են կախյալ ու անկախ փոփոխականները, կատարվում են դրանց համապատասխան նշանակումները (ենթադրենք y_t , x_t), ինչը մոդելը ըմբռնելի է դարձնում: Սակայն ատենախոսության մեջ տեքստում նման մոտեցումը բացակայում է, ինչի արդյունքում օրինակ 149-ում ներկայացված մոդելի արդյունքների բացատրությունը ուղղակի չի հասկացվում:
5. Ատենախոսության 3.3 ենթագլխում հեղինակը փորձել է գնահատել, թե պարտադիր բժշկական ապահովագրության ներդրումը ի՞նչ հետևանքներ կունենա ՀՆԱ-ի աճի վրա: Այդ նպատակով մշակել է էկոնոմետրիկ մոդել, որի միջոցով փորձել է կանխատեսել, թե մեկ շնչի հաշվով պարտադիր ապահովագրավճարների փոփոխությունը, ինչպես կազդի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի փոփոխության վրա: Նախ մոդելը, մեր կարծիքով, խնդրահարույց է, քանի որ հեղինակը ինքն է նշում, որ ՀՀ-ում պարտադիր ապահովագրավճարները ձևավորվում են ԱՊՊԱ-ից, ոչ թե պարտադիր բժշկական ապահովագրության գումարից, հետևաբար այն որպես անկախ փոփոխական օգտագործելը ու էքստրապոլացնելը պարտադիր բժշկական ապահովագրության վրա նպատակահարմար չէ: Բացի այդ հեղինակը 159-րդ էջում նշում է, որ ՀՆԱ-ի վրա ազդեցության իրական չափը հնարավոր չէ միանշանակ կանխատեսել (բազմաթիվ այլ, մոդելում չներառված գործոններով պայմանավորված) ու ստացված արդյունքները խիստ մոտավոր են, հետևաբար ուղղակի անիմաստ էր այս մոդելը աշխատանքում ներառելը և ատենախոսությունը ավելորդ հաշվարկներով ծանրաբեռնելը: Նշենք նաև, որ բավականին ծավալուն է ստացվել (շուրջ 50 էջ) միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքների շարադրումը, որը նկատելիորեն անդրադարձել է ատենախոսության կառուցվածքի վրա: Այս դեպքում, կարելի էր սկզբունքորեն ապահովագրական նույն մոդել ունեցող երկրներին խմբավորել:
6. Էջ 135, առաջին քայլով՝ առաջնահերթությունը տալով պետական հատվածի աշխատողներին խախտվում է սոցիալական արդարության սկզբունքը, եթե նրանք արդեն ներգրավված են սոց. փաթեթում, ապա նրանց փոխարեն, մեր կարծիքով, ավելի ցանկալի կլիներ ներգրավել հասարակության թիրախային այլ խմբերին, և իրականացնել ըստ տնտեսության ոլորտների աշխատողների թվի և աշխատավարձերի մեծության հետազոտություն, որը ցույց կտար, թե ո՞ր ոլորտի համար է առավել մատչելի առողջապահական ապահովագրությունը:

7. Չնայած կատարված մեծածավալ աշխատանքին, ատենախոսությունում կան բազմաթիվ լեզվաոճական, շարադրանքի ու շարահյուսության խնդիրներ: Ցանկալի կլիներ, որ ատենախոսությունը խմբագրության լրացուցիչ փուլեր անցներ, քանի որ շատ դեպքերում շարադրանքի սխալները բերում են բովանդակության խեղաթյուրման և ավելորդ շփոթություն են առաջացնում ընթերցողի մոտ: Օրինակ ատենախոսության 148-րդ էջում հեղինակը խոսում է ապահովագրության խտության աստիճանի մասին, որը ցույց է տալիս «մեկ անձ»ի գծով ապահովագրավճարների մեծությունը, ապա հաջորդ պարբերությունում «մեկ անձ»-ը փոխարինում է «մեկ շունչ» արտահայտությամբ, ապա 150-րդ էջում կրկին օգտագործում է «մեկ անձ» տարբերակը, ու այդպես շարունակ: Նմանատիպ վրիպումները բազմաթիվ են նաև էկոնոմետրիկ մոդելների բացատրություններում: Նշված թերացումները էապես նվազեցնում են ատենախոսության գիտականությունը:
8. Եզրակացություններ և առաջարկություններ բաժնում հեղինակը նշել է որոշ եզրահանգումներ, որոնց ուղղությամբ որևէ ուսումնասիրություն աշխատանքում կատարված չի (օրինակ՝ կետ 5, 11, 12):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գագիկ Մուշեղի Հակոբյանի «Պարտադիր ապահովագրատեսակների ներդրման ազդեցությունը ՀՀ տնտեսության և ապահովագրական շուկայի զարգացման վրա» թեմայով ատենախոսությունը կարելի է որակել որպես ինքնուրույն հետազոտություն, որն ուղղված է ՀՀ տնտեսության և ապահովագրական շուկայի զարգացման վրա պարտադիր ապահովագրատեսակների ներդրման ազդեցության բացահայտմանը:

Ատենախոսության արդյունքները կարող են կիրառվել պարտադիր ապահովագրության ներդրման հայեցակարգերի մշակման և ներդրման, տնտեսական ցուցանիշների վրա օրենսդրական փոփոխությունների հնարավոր արդյունքների կանխատեսման և դրանցից ելնելով քաղաքականությունների մշակման գործընթացներում՝ ՀՀ Առողջապահության նախարարության, ՀՀ Ֆինանսների նախարարության և ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից: Ատենախոսության արդյունքները կարող են ուշագրավ լինել ՀՀ ապահովագրական ընկերությունների և ՀՀ Ավտոապահովագրողների Բյուրոյի համար, ինչպես նաև ոլորտի զարգացմամբ հետաքրքրվող մասնագետների և ՀՀ քաղաքացիների համար:

Թեկնածուական ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական բովանդակությունը, արդյունքները և գիտական նորույթը: Հեղինակի կողմից հրապարակած 11 (տասնմեկ) գիտական հոդվածները համապատասխանում են

հետազոտության ուղղվածությանը, դրա խնդիրներին և ունեն բավարար ընդգրկունություն:

Գազիկ Մուշեղի Հակոբյանի «Պարտադիր ապահովագրատեսակների ներդրման ազդեցությունը ՀՀ տնտեսության և ապահովագրական շուկայի զարգացման վրա» թեմայով ատենախոսության և դրան համատեղ կազմված սեղմագիրն ու թվով 11 (տասնմեկ) հոդվածների հրապարակումները համապատասխանում են ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ աշխատանքի հեղինակը արժանի է Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, «Ատենախոսությունների քննարկման և կարծիքների ներկայացման» հանձնաժողովի նիստում (13.06.2024թ., արձանագրություն թիվ 8):

**ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ ավագ
գիտաշխատող,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ**

Ա.Մառինյան

**ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ
գիտաշխատող,
տնտեսագիտության թեկնածու**

Հ.Ասատրյան

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի ՏԻ ավագ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ա.Մառինյանի և նույն ինստիտուտի գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու Հ.Ասատրյանի ստորագրությունների իսկությունը «հաստատում են»՝

**ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ գիտ. քարտուղար,
տնտեսագիտության թեկնածու
«13» հունիսի, 2024թ.**

Ե.Ա.Հակոբյան

